«ԶԱԳԵԶՈՐ»
Հեռուստաընկերություն
ՍՊԸ

«DZAGEDZOR»
Broadcasting Company
LTD

ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Հ.Ավետիսյան 22/Ա
Հեռ.028524306 բջջ.099.252762
Էլ. Փոստ ztvkapan@mail.ru

RA. Syunic marz c Kapan, U.Avetisyan 22/A
Tell. 028524306 / 099.252762
E-mail: ztvkapan@mail.ru

Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանին

Զանգեզուր հեռուստաընկերության

լրագրող Անուշ Միրզոյանից

Հարցում

Հարգելի՛ Մելիքսեթ Պողոսյան,

Ձեր՝ 2021թ. մայիսի 10, 11, 17, 31, հունիսի 14-ի N Ա որոշման համաձայն՝ ավելի քան 300 անձ գումար է ստացել մարզպետարանից՝ 20-100 հազար ՀՀ դրամի չափով:

1.Ի՞նչ նպատակով է մարդկանց տրամադրվել այդ գումարը: Եթե օգնության նպատակով, ապա ինչո՞ւ ընտրությունից ընդամենը օրեր առաջ՝ 6 օր կամ մոտ մեկ ամիս առաջ: Ի՞նչ սկզբունքով եք ընտրել մարդկանց, որոշել գումարների չափերը: Ովքե՞ր են այն մարդիկ, ում Դուք գումար եք տրամադրում:

2.Ի՞նչ պարբերականությամբ եք նման գումարներ տրամադրում քաղաքացիներին. մայիսի 10-ից առաջ վերջին անգամ ե՞րբ եք գումար տվել:

3.Այդ գումարը տրամադրվել է մարզպետարանի բյուջեի՞ց, թե՞ վերջերս կառավարության որոշմամբ Սյունիքի զարգացման ու ներդրումների հիմնադրամին հատկացված 500 միլիոն դրամի շրջականում: Եթե առաջին տարբերակն է, ապա ինչպե՞ս է մարզպետարանի բյուջեում գոյացել այդ գումարը, ինչի՞ հաշվին, եթե երկրորդ, ապա ինչո՞ւ հենց հիմնադրամի միջոցներից է հատկացվել օգնությունը:

4.Առհասարակ, այդ 500 միլիոնը ինչպե՞ս է ծախսվել, խնդրում եմ հատկացնել հաշվետվություն՝ շեշտում եմ՝ մանրակրկիտ բացվածքով, ոչ մակերեսային:

Զանգեզուր հեռուստաընկերության

լրագրող Անուշ Միրզոյան

27.07.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 28544291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

«02» օգոստոս 2021թ., № 01/15/04888-21

Ձեր՝ « 27 » հուլիսի 2021թ.

Զանգեզուր հեռուստաընկերության լրագրող

Անուշ Միրզոյանին

Հարգելի՛ Ա. Միրզոյան

Ի պատասխան 27. 07. 2021թ. Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը:

2021թ. մայիսի 10-ի, 13-ի (11-ին նման որոշում չկա), 17-ի, 31-ի, հունիսի 14-ի 2 որոշումներով ոչ թե 300-ից ավելի անձ (ինչպես նշել եք), այլ 167 անձ է ստացել դրամական օգնություն:

Օգնության տրամադրումը որևէ առնչություն չունի ընտրությունների հետ. դրանք տարիներ շարունակ տրամադրվել են, իսկ 2021թ. տրամադրվել են ոչ միայն Ձեր նշած, այլև տարվա մյուս ամիսներին, տրամադրվել են նաև նախորդ տարիներին՝ անկախ նրանից, թե ով է պաշտոնավարել որպես մարզպետ, ինչպես նաև շարունակվել են ընտրություններից հետո ու կշարունակվեն տրամադրվել այսուհետ ևս:

Օգնությունը տրվում է մարզպետարան դիմած սոցիալապես անապահով քաղաքացիներին, ընդ որում, յուրաքանչյուրին տարեկան մեկ անգամից ոչ ավելի՝ հիմք ընդունելով մարզպետի որոշմամբ ստեղծված «Նյութական (դրամական) օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի» եզրակացությունը: Մշակվել է «Ընտանիքի սոցիալական վիճակի համառոտ նկարագիր», որը տարբեր հարցումների և ուսումնասիրությունների միջոցով լրացնում ու հանձնաժողովին է ներկայացնում մարզպետարանի սոցիալական ապահովության բաժինը, որի հիման վրա հանձնաժողովն ընդունում է քաղաքացուն դրամական օգնություն հատկացնելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:

Քաղաքացիներին օգնություն տրամադրելու կոնկրետ պարբերականություն չկա, այն կախված է մարզպետարան դիմած քաղաքացիների քանակից կամ դիմումները քննելու հրատապությունից: Մայիսի 10-ից առաջ վերջին անգամ դրամական օգնություն է տրվել մայիսի 7-ին, դրանից առաջ, օրինակ՝ մայիս 4-ին, ապրիլի 29-ին և այլն:

Գումարները տրամադրվում են ՀՀ պետական բյուջեով ՀՀ Սյունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով: Կարիքավոր քաղաքացիներին օգնելու համար նախատեսված գումար մարզպետարանը ՀՀ պետբյուջեից ստացել ու քաղաքացիներին աջակցելու հնարավորություն ունեցել է բոլոր տարիներին:

Ինչ վերաբերում է Սյունիքի զարգացման ու ներդրումների հիմնադրամին ՀՀ պետբյուջեից հատկացված 500 մլն դրամին, ապա 2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ այդ գումարից

- 39 մլն 701 հազար 500 դրամ ուղղվել է մարզի համայնքների զարգացմանը,
- 92 մլն 796 հազար 400 դրամ՝ մարզի անվտանգության համակարգի բարելավմանը,
- 82 մլն 100 հազար դրամ՝ մարզի գյուղատնտեսության խթանմանը,
- 4 մլն դրամ՝ մարզի արտակարգ իրավիճակների կանխարգելմանը,
- 12 մլն 782 հազար դրամ՝ մարզում պատերազմից տուժած տնտեսությունների աջակցությանը:

2021թ" օգոստոսի 1-ի դրությամբ հիմնադրամում տվյալ հատկացման մնացորդը 268 մլն 620 հազար 200 դրամ է:

8/2/2021

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано: BABAYAN NAREK 1505920434

Հարգանքով՝ **/Մ. Պողոսյան**

Կատարող Ա. Ավագյան
հեռ. +37493491167
syunik.press@mta.gov.am

«ԶԱԳԵԶՈՐ»
Հեռուստաընկերություն
ՍՊԸ

«DZAGEDZOR»
Broadcasting Company
LTD

ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Հ.Ավետիսյան 22/Ա
Հեռ.028524306 բջջ.099.252762
Էլ. Փոստ ztvkapan@mail.ru

RA. Syunic marz c Kapan, U.Avetisyan 22/A
Tell. 028524306 / 099.252762
E-mail: ztvkapan@mail.ru

ՀՀ Սյունիքի մարզի մարզպետ

Մելիքսեթ Պողոսյանին

«Զանգեզուր» թիվիի լրագրող,

Անուշ Միրզոյանից

2021թ. օգոստոսի 1-ի դրությամբ Սյունիքի զարգացման ու ներդրումների հիմնադրամին ՀՀ պետբյուջեից հատկացված 500 մլն դրամից

1. 39 մլն 701 հազար 500 դրամ ուղղվել է մարզի համայնքների զարգացմանը

2. 92 մլն 796 հազար 400 դրամ՝ մարզի անվտանգության համակարգի բարելավմանը

3. 82 մլն 100 հազար դրամ՝ մարզի գյուղատնտեսության խթանմանը

4. 4 մլն դրամ՝ մարզի արտակարգ իրավիճակների կանխարգելմանը

5. 12 մլն 782 հազար դրամ՝ մարզում պատերազմից տուժած տնտեսությունների աջակցությանը

2021 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հիմնադրամում տվյալ հատկացման մնացորդը 268 մլն 620 հազար 200 դրամ է:

Մեր գրավոր հարցմանը Սյունիքի մարզպետարանից հենց այսպիսի պատասխան ենք ստացել օգոստոսի 2-ին:

Հարգելի Մելիքսեթ Պողոսյան, Ձեր տված գրավոր պատասխանները մեզ չեն բավարարել, ուստի խնդրում եմ տալ մանրակրկիտ հաշվետվություն:

Առաջին կետում՝ 39 մլն 701 հազար 500 դրամ գումարը, որ ուղղվել է մարզի համայնքների զարգացմանը, ասացեք խնդրեմ, մարզի բոլո՞ր համայնքների համար է արվել: Համայնքների կոնկրետ ո՞ր բնակավայրերի մասին է խոսքը: Նշել ժամանակահատվածը, որ օր, ամիս, տարի: Լայն բացվածքով հաշվետվություն տվեք, թե ինչպե՞ս է զարգացել համայնքը այդ գումարով, այդ գումարից ինչքանը, որտեղ է ծախսվել, օրինակ 701 հազարը, 500 դրամը և մնացած գումարը ինչի՞ վրա եք ծախսել, որ զարգանա համայնքը, ի՞նչ եք գնել, ինչքաո՞վ, ո՞ւմ եք վարձատրել, ինչքա՞ն, և այսպես շարունակ: Խնդրում եմ լայն բացվածքով:

Երկրորդ կետում 92 մլն 796 հազար 400 դրամով բարելավել եք մարզի անվտանգության համակարը: Օրինակ ինչի՞ վրա է ծախսվել 2 միլիոնը, 400 դրամը, 796 հազարը կամ 5 միլիոնը, որ ըստ այդմ էլ անվտանգության համակագրը բարեկավվել է: Ո՞ր վտնագավոր բնակավայրերում եք բարելավվել անվտանգության համկարգը և երբ: Խնդրում եմ լայն բացվածքով հաշվետվություն տալ: Նշել սույն գումարից ինչքանը որտեղ է ծախսվել:

Երրորդում 82 մլն 100 հազար դրամը մարզի գյուղատնտեսության խթանմանը համար եք հատկացել: Կրկին նույն ձևաչափով, ի՞նչ եք արել այդ 80 և ավելի միլիոնը, տեխնիկա՞ եք գնել, որտեղի՞ց, ինչքանո՞վ, առձեռն գումա՞ր եք տվել գյուղացիներին, ինչքա՞ն, ի՞նչ նպատակով, գյուղատնետսության զարգացման համար ինչպես եք ծախսել այդ 82 մլն 100 հազար դրամը: Խնդրում եմ լայն բացվածքով:

Չորրորդ կետում 4 մլն դրամ եք հատկացրել մարզի արտակարգ իրավիճակների կանխարգելմանը: 4 միլիոնից սարքեր ու տեխնիկա՞ եք գնել, ինչքանո՞վ , որտեղի՞ց, ե՞րբ, ո՞ր կառույցների համար, Էլ ի՞նչ եք արել, որ ծախսվել է այդ 4 միլիոնը: Խնդրում եմ տալ այդ 4 միլիոնի լայն բացվածքով հաշվետվությունը:

Հինգերորդ կետում՝ 12 մլն 782 հազար դրամ՝ մարզում պատերազմից տուժած տնտեսությունների աջակցությանը: Ի՞նչ է սա նշանակում: Այսինքն՝ գումար եք տվել մարդկանց , որ վերացնե՞ն պատերզմի հետևանքները: Ինչքա՞ն եք տվել, ե՞րբ, քանի՞ տնտեսության, Թե Դուք եք ինչ որ բան գնել ու տվել նրանց. օրինակ տեխնիակ, շիննյութեր և այլն: Ինչպես է ծախսվել այդ 12 միլիոն 782 հազարը: Խնդրում եմ տալ լայվ բացվածքով հաշվետվություն:

Մնացած 268 մլն 620 հազար 200 դրամը ինչպե՞ս եք պատրաստվում ծախսել, արդեն կա՞ն հստակ ուղղություններ կամ հրատապ խնդիրներ:

Դիմող՝ Անուշ Միրզոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 28544291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

«24» օգոստոս 2020թ., № 01/03/05491-2021

«Զանգեզուր թիվի» հեռուստաընկերության լրագրող
Անուշ Միրզոյանին

Հարգելի տիկին Միրզոյան

Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021թ. ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» N 699-Ն որոշմամբ հատկացված գումարի ծախսման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն Ձեր և/կամ այլ լրատվական միջոցների օգնությամբ հանրությանը կտրամադրենք իրականացվող ծրագրերի ավարտից հետո:

Недействительная подпись

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

Հարգանքով՝ **Մ. Պողոսյան**